

ԵՐԿՈՒ ԴՐԱՑԻՆԵՐ՝ ՏԱՐԲԵՐ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐՈՎ

Ղարարադեան հարցը հետաքրքրեց բոլոր հեռու եւ մօտիկ երկիրները: Բայց ինչպէս սպասելի էր, հայ-ատրպէյճանական յարաբերութիւնները ընդհանրապէս եւ զարարադեան հարցը մասնաւորապէս յուզեցին Հայաստանի երկու դրացիները, Թուրքիան եւ Իրանը: Անշուշտ երկուքն ալ չկրցան բացայայտօրէն արտայայտուիլ կամ թէկուզ գործնական որեւէ քայլ առնել, որովհետեւ այդպիսի փորձ մը կրնար դիտուիլ իբրեւ դերհօր երկրի մը ներքին հարցերուն միջամտութիւն: Իսկ Իրանի նման պատերազմական երկրին համար շատ մեծ նշանակութիւն ունէր հիւսիսի դրացիին գրաւած զիրքը եւ այդպիսի քայլ մը ճակատագրական կրնար ըլլալ իրեն համար:

Նոյնը նաեւ Թուրքիան: Ան թէեւ սխերիմ թշնամին է ՌՍՀՄին, սակայն սեփական վախէն ամբողջ սահմանը ՆԱԹՕի տրամադրութեան տակ դրած է եւ հօր դրացի մը ջղայնացնելը անարկու վտանգներու հետ կապուած է: Ուստի, երկու երկիրներն ալ իրենց զիրքերը շատ ուշ, անորոշ եւ կցկուս կերպով բացայայտեցին:

Ինչքան ալ կցկուս, սակայն, ուշադիր հետեւողը կը նկատէր երկու տարբեր մօտեցումներ՝ խլամական երկու երկիրներուն մօտ: Այս եւս անհերքելի ապացոյց է, թէ զարարադեան շարժումը հակախլամական է: Հայ ժողովուրդը ոչ մէկ հակասութիւն ունի խլամ ժողովուրդներուն կամ կրօնքին հետ: Եթէ հարց ունինք, ապա միայն Թուրքիոյ հետ, որ դարեր շարունակ պատերազմած է Իրանի դէմ ու դարեր ալ ճնշած ու հարստահարած արար կրայրական ժողովուրդները: Եթէ այսօր մեր յարաբերութիւնները սրուած են Խորհրդային Ատրպէյճանին հետ, այդ չի նշանակեր թէ հայ ժողովուրդը պայքարի դրօշ բարձրացուցած է խորհրդային խլամներուն դէմ: Մեզի քիչ կը հետաքրքրէ թէ քանի մղկիթ բարձրացեր է Ուսպեկիստանի կամ Ղազախիստանի մէջ, կամ թէ քանի տոկոս աւելցեր է հաւատացեալներուն թիւը այս երկիրներուն մէջ, եթէ անոնք ուղղուած չեն մեր ազգին դէմ:

Մենք կ'ուզենք խաղաղ ու հաշտ ապրիլ մեր բոլոր դրացիներուն հետ՝ ինչ կրօնքի կամ դաւանանքի ալ պատկանին անոնք: Սակայն այս չի նշանակեր թէ հայ ժողովուրդը պիտի մոռնայ իր 1,5 միլիոն զոհերը, իր բռնադրուած հողերը, որոնք կը դանուին Թուրքիոյ սահմաններուն մէջ: Նոյնպէս մեր խաղաղասիրութիւնը չի նշանակեր հաշտութեամբ իրեն «կրայր» Ատրպէյճանի զուլումներուն ու ճնշումներուն, քանզումներուն ու թրքատիպ խժոժութիւններուն նկատմամբ:

Ղարարադեան պահանջատիրութիւնը որոշակի հարց է: Ան արցախահայութեան պահանջն է վերադառնալու մայր հայրենիքի զիրկը. ուրիշ ոչ մէկ բան: Այստեղ ոչ հակասութեամբ կանխուած է, ոչ հակախլամականութիւն:

Ազգայնամոլ Պաղլերովներն ու Ալիեւները պէտք է զիտակցին, որ ոչ մէկ բան պիտի շահին իրենց ժողովուրդը դր-

դրուելով հայերուն դէմ: Այդպէս վարուելով անոնք ինքնարար կը դառնան թուրք պետութեան գործակալներ, որոնց տեղեկատուական միջոցները սկզբնական շրջանին մի քանի արտայայտութիւններ ունեցան «չփացած հայերուն» եւ անոնց «Մոսկուայի կողմէն պատժուելու անհրաժեշտութեան» մասին:

Դէպքերուն զարգացման առնթներ, թուրք լրատուութիւնը կը պահպանէր իր արեւմտեան քօղը, հազարակով այն ինչ կը պատահէր:

Թուրքերն ալ զարմացած էին հարիւր հազարաւոր ցոյցերուն ի տես Մոսկուայի ցուցարեւած հանդուրժողութեան: Իսկ երբ նկատեցին, որ խորհրդային կառավարութիւնը կ'ուշացնէ իրենց ակնկալած ազդու միջամտութիւնը, իրենք ալ մոռցան իրենց երազածին մասին՝ թէ Մոսկուան պէտք է դառնայ հայերուն: Աւելին, սկսան նոյնիսկ բացատրել թէ Ղարարադը ժամանակին հայերուն կը պատկանէր եւ Ստալինի միջամտութեամբ միացուեր էր Ատրպէյճանին:

Եկաւ ժամանակ, երբ Թուրքիան Արեւմուտքին հետ միասին, ուրախութեամբ նկատեց թէ զարարադեան շարժումը կրնար հակասովետական բնոյթ ստանալ: Ահա այդ ժամանակ թուրք լրատու գործակալութիւնները ընդունեցին, որ Լեռնային Ղարարադը հայերուն պէտք է վերադարձուի, որովհետեւ այնտեղի բնակչութեան մեծամասնութիւնը հայեր են: Տոգատակի միտքը այն էր, թէ քանի Լեռնային Ղարարադի 75 տոկոս կազմող հայութիւնը կ'ուզէ միանալ Խ. Հայաստանին, ապա խորհրդային կեդրոնական կառավարութիւնը պէտք էր բաւարարէ ժողովուրդին այս պահանջը:

Շատեր հակառակ վերաբերում կը սպասէին մեր թշնամիին: Բայց այստեղ Թուրքիան երկու նպատակ կը հետապնդէր.

1.- Ղարարադի բնակչութեան մեծամասնութիւնը հայեր են, ուրեմն - ի հեծուկս Մոսկուային - թուրք պետութիւնը կը գտնէ որ այդ Լեռնային մարզը կրնայ արուիլ հայերուն: Հետեւութիւնը՝ քանի Կարսի, Արտասանի, Վանի կամ Էրզրումի մէջ ոչ մէկ հայ կայ, ուստի ոչ մէկը կրնայ սպառնալին պահանջել այս շրջաններուն միացումը Խ. Հայաստանին:

2.- Եթէ Լեռնային Ղարարադը չմիացուի Խ. Հայաստանին, ապա հայերը պէտք է զիտակցին թէ ո՞վ է իրենց թշնամին եւ որո՞ւն դէմ պէտք է ուղղեն իրենց պայքարը:

Հայաստանի միւս հարեանը՝ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը, թէպէտ խիստ դրազած, այսուհանդերձ անդրադարձան այս հարցին: Ճիշդ է, հարեանցի, բայց կարծիքը արտայայտուեցաւ երկրին վերադոյն պետին միջոցով: Իմամ Խոմէյնին յայտարարեց, որ թէ՛ Ղարարադը եւ թէ՛ Նախիջևանը հայերուն կը պատկանին: Ան ազդարարեց, որ ոչ մէկը փորձուի ի դուր տեղը իր անունը կամ նկարները օգտագործել այս հարցին կապակցութեամբ:

Առայժմ մենք չենք գիտեր թէ այդ ժամանակաշրջանի պարսկական լրատու գործակալութիւնները ի՞նչ վերաբերեցան ցոյց կուտային, բայց Իրանի զիրքորոշումը՝ արտայայտութեամբ Այաթոլլահ Խոմէյնիի բերանով, յստակ էր ու մեկնարանութեամբ կարօտ չէ:

Պարզ է, Իրանն ալ նկատած պիտի ըլլար Խորհրդային Ատրպէյճանին ախորժակները, որոնք կը ներառեն նաեւ Իրանի հիւսիս-արեւելեան ընդարձակ շրջանները: Անշուշտ այս մասին միայն իղձեր չէ որ կ'արտայայտուին, այլ ատրպէյճանցի մտերմականները ամբողջ զրականութիւն ստեղծած են այս ուղղութեամբ: Անոնցմէ մէկը վերջերս մենք տեսանք Երևանի փոքր զբօսիկ մըն էր, որուն կողքին նկարուած էր Մեծն Ատրպէյճանի քարտէսը՝ Նախիջևանով, Ղարարադով եւ Հիւսիսային Պարսկաստանով...

Յիշենք նաեւ այս տարուան Մարտ 8ի հեռուստատեսաւարկը հազարավոր, ուր ատրպէյճանցի «մտաւորական» կանաչ զինուորներուն դէմ յարձակումներ կատարելէ ետք, ախոսացին իրենց սպաւոր քոյրերուն համար, որոնց ամուսինները կը զոհուին Իրան-Իրաք պատերազմին ընթացքին, «Կոմունիստ», «Ինտերնացիոնալիստ» տիկիներ, մեծ յուզումով խորին ցաւակցութեամբ ներ յայտնեցին բոլոր «ատրպէյճանցի հայրենակիցներուն» Անոնք բնաւ չմտածեցին հազարաւոր քուրտ, հայ, արաբ պարսիկ երիտասարդներուն մասին, որոնք նոյնպէս կը ուէին պատերազմին ընթացքին:

Նորէն կրկնենք, որ մեր երկու դրացիներն ալ կ'ուշատար խօսքէն անդին շանցան, որովհետեւ չէին կրնար: Որովհետեւ Մոսկուան շատ ուժեղ է եւ անսասան տէրը Անդրկովկասը: